**Հավելված 1**

**Ակունք համայնքի ղեկավարի 26 մայիսի**

**2025թվականի թիվ 500-Լ որոշման**

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

**Թափուր պաշտոնի անվանումը՝**

**Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)**

**Աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**

- Քարտուղարը աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը.

Քարտուղարը ունի համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

-ունի «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» , «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

**Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.**

-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

-Տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար(կարդում,կարողանում է բացատրվել) լեզվի:

Մրցույթը կկայանա 27 հունիսի 2025թ. ժամը 11$^{\underline{00}}$ –ին Ակունքի համայնքապետարանի շենքում ,հասցեն՛ ՀՀ Կոտայքի մարզ Ակունք համայնք (գ. Ակունք, հեռ. 077-870825):

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 12 հունիսի 2025թ.

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

*դիմում մրցութային հանձնաժողովի անունով( լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին

*արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին

*մեկ լուսանկար 3x4 չափսի

*անձնագրի պատճենը

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքի աշխատակազմում ժամը 10$^{\underline{00}}$ - ից մինչև 17$^{\underline{00}}$ -ը, կամ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչությունում: ՏԻ և ՀԾՀ բաժնի հեռ. 0223 2-34-13, ժամը 10$^{\underline{00}}$ -ից մինչև 17$^{\underline{00}}$ , բացի շաբաթ և կիրակի օրերից: